«Բայազետ»
վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Գավառ, Քալաշյան 15
Հեռ. (077)-38-44-33
Էլ. հասցե: bayazet.center@gmail.com
Կայք: www.bayazet.org

"Bayazet"
Armenian Analytical-Research Center
15 Khalashyan., Gegharkunik Province, RA
Tel. (077)-38-44-33
Email: bayazet.center@gmail.com
Web: www.bayazet.org

11 դեկտեմբեր, 2025

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## վերջին 3 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

«Բայազետ» կենտրոն ՀԿ (լրիվ անվանումը՝ *«Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն ՀԿ)* անկախ հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2021 թվականին Գավառում և հանդիսանում է Գեղարքունիքի մարզի[1] առաջին ուղեղային կենտրոնը[2]: Հիմնադրումից ի վեր, կենտրոնի գործունեությունը նպաստում է Գեղարքունիքի մարզում քաղաքանությունների մշակմանը, պետական և քաղաքացիական հասարակության կառուցողական երկխոսության ամրապնդմանը, ինչպես նաև մարդու իրավունքների և ժողովրդավարության պաշտպանությանը[3]:

2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ «Բայազետ» կենտրոնին անդամակցում են 17 ասպիրանտներ և մագիստրոսներ՝ հայաստանյան և արտասահմանյան համալսարաններից ու գիտահետազոտական կենտրոններից:

Ոլորտում ունեցած վստահությունն արդյունք է Կենտրոնի շարունակական աշխատանքի և փորձառության: Իսկ փորձառությունը հիմնավորում են թվային տվյալները՝

- 42 թեմատիկ դասընթացների, սեմինարների և քննարկումների կազմակերպում,
- 7 գրքի և 3 ուղեցույցի հրատարակություն,
- 132 թարգմանության իրականացում և հրապարակում (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, թուրքերեն և ադրբեջաներեն լեզուներից)
- 9 ծրագրային հայտի ֆինանսավորում European Union, USAID, Counterpart International, Ջինիշյան հիշատակի հիմնադրամ, Վանդերբիլթի համալսարան, Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ և այլ գործընկերների կողմից:

Վերոնշյալի համատեքստում, «Բայազետ» կենտրոնը նախաձեռնել և իրականացրել է մի շարք նշանակալի միջոցառումներ՝ ուղղված ՀՀ Ներքին գործերի նախարարություն–քաղաքացիական հասարակություն երկխոսության խորացմանը, ինչպես նաև բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացմանը, մասնավորապես՝

- 2025 թվականի նոյեմբերի 2-ին Գավառ քաղաքում կազմակերպվել է հանդիպում-քննարկում՝ նվիրված ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության վերջին մի քանի տարիների բարեփոխումներին, որին մասնակցել են մարզում գործող

[1] ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող նշանակալի հասարակական կազմակերպություններ, Մարզպետարանի պաշտոնական ցանկ, առաջին տեղ՝ http://gegharkunik.mtad.am/ngo/
[2] Ուղեղային կենտրոնները ձգտում են գրադարանագիտական աշխատանքի զարգացմանը. «Բայազետ» կենտրոն, https://azg.am/հասարակություն/ուղեղային-կենտրոնները-ձգտում-են-գրադ/
[3] «Բայազետ» կենտրոնը երիտասարդների համար նոր հնարավորություններ է ստեղծում, https://www.aravot.am/2022/11/23/1306437/ © 1998 - 2024 Առավոտ – Լուրեր Հայաստանից

հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, Գավառի պետական համալսարանի դասախոսներ և երիտասարդներ,

- 2025 թվականի սեպտեմբերի 13–14-ին Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում անցկացվել է երկօրյա դասընթաց կանանց համար՝ «Ընտանեկան բռնության կանխարգելում» թեմայով, որի շրջանակում հատուկ շեշտադրում է կատարվել համայնքային ոստիկանության դերի և նշանակության վրա,

- 2025 թվականի մարտի 3-ին «Բայազետ» կենտրոնի գրասենյակում, մարզում գործող այլ հասարակական կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ, կազմակերպվել է հանդիպում ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հետ[4], որի ընթացքում քննարկվել են նաև մարզում սեյսմիկ անվտանգության ապահովման, ենթակառուցվածքների բարելավման, ինչպես նաև բնակչության իրազեկման և երկրաշարժերի ժամանակ պատրաստվածության բարձրացմանն ուղղված հարցեր,

- 2024 թվականի օգոստոսի 29-ին «Բայազետ» կենտրոնը ընդգրկվել է ՀՀ Ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում: Լինելով Գեղարքունիքի մարզից ընտրված միակ հասարակական կազմակերպությունը՝ Կենտրոնը պարտաճանաչ կերպով մասնակցել է խորհրդի բոլոր նիստերին և նախարարության կողմից կազմակերպված միջոցառումներին,

- 2024 թվականի ապրիլի 27-ին «Բայազետ» կենտրոնը Գավառի մշակույթի տանը հյուրընկալեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որտեղ քննարկումը վարում էր Վահրամ Հովեյանը[5]:

- 2023 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ Կառավարությունում տեղի ունեցած «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» փաստաթղթի մշակման աշխատանքներում ներդրում ունեցած երիտասարդ փորձագետների պարգևատրման արարողության ընթացքում «Բայազետ» կենտրոնի ղեկավար Վահրամ Հովեյանը պարգևատրվել է ՀՀ կառավարության պատվոգրով[5]:

- 2023 թվականի դեկտեմբերին Գեղարքունիքի մարզի Գավառ, Սևան և Մարտունի համայնքներում «Բայազետ» կենտրոնը կազմակերպել էր իրազեկման արշավ «Ինչպե՞ս պաշտպանել անչափահասներին թմրամիջոցների օգտագործումից»

- 2023 թվականի հունիսի 30-ին «ԶԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» ծրագրի մարզային շնորհանդես

- 2023 թվականի հուլիսին իրազեկման արշավ գյուղականա համայնքներում խոզանների ու բուսական մնացորդների այրումից խուսափելու նպատակով:

---

[4] https://www.facebook.com/photo.php?fbid=337953282221910&set=pb.100080217222837.-2207520000&type=3
[5] https://www.youtube.com/watch?v=CdtKLwn2nBM